

ՄԵԴԻԱ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ
Երևան, հուլիս 2016 թ.

Սույն զեկույցի հեղինակն է՝ Աղասի Ենոքյանը, aghasi.yenokyan@gmail.com

Մույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19319: Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8

ՌԱԴԻՈՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՌԱԴԻՈՅԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՀԱՄԱՑԱՆՅԻ ԼՍԱՐԱՆԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՀԱՄԱՑԱՆՅԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՀԱՄԱՑԱՆՅԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 10

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ 10

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 11

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 11

Վաճառողի շուկա 11

Գնորդի շուկան 15

ՌԱԴԻՈԳՈՎԱԶԴԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16

ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶԴԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ՀԱՎԵԼՎԱԾ 1 21

ՀԱՎԵԼՎԱԾ 2 25

ՀԱՎԵԼՎԱԾ 3 27

ՀԱՎԵԼՎԱԾ 4 28

ՀԱՎԵԼՎԱԾ 5 29

ՀԱՎԵԼՎԱԾ 6 31

ՀԱՎԵԼՎԱԾ 7 32

ՀԱՎԵԼՎԱԾ 8 34

ՀԱՎԵԼՎԱԾ 9 35

ՀԱՎԵԼՎԱԾ 10 39

ՀԱՎԵԼՎԱԾ 11 40

ՀԱՎԵԼՎԱԾ 12 41

ՀԱՎԵԼՎԱԾ 13 43

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն զեկույցում ներկայացված են անկախ մասնագետների կողմից Հայաստանի լրատվական դաշտի ֆինանսավորման ուսումնասիրության արդյունքները եւ եզրակացությունները: Ուսումնասիրությունը իրականացվել է «Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն» (ՔՄՀՀԿ) հասարակական կազմակերպության կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության օժանդակությամբ:

Զեկույցում ներկայացված են հեռուստատեսային, ռադիո եւ համացանցային լրատվամիջոցների գովազդային շուկաները, կառուցվածքային առանձնահատկությունները:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ հեռուստատեսային եւ համացանցային գովազդի շուկաներում կան գերակշիռ դիրք ունեցող ընկերություններ, ընդ որում, հեռուստատեսային շուկայում գերակշիռ դիրք ունեցող մասնակիցներ կան ե՛ւ վաճառողի, ե՛ւ գնորդի շուկաներում: Հետազոտությունը նաև պարզել է, որ ռադիոգովազդի շուկայում չկան գերակշիռ դիրք ունեցող մասնակիցներ: Հիմք ընդունելով վերոնշյալ բացահայտումները՝ ՔՄՀՀԿ-ը դիմումներ է ներկայացրել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՏՄՊՊՀ) հեռուստատեսային եւ համացանցային շուկաներում տիրող մենաշնորհային իրավիճակի վերաբերյալ, որպեսզի հանձնաժողովը քննություն իրականացնի հեռուստագովազդի եւ համացանցային գովազդի բնագավառներում մենաշնորհի առկայության վերաբերյալ եւ ձեռնարկի համապատասխան միջոցառումներ:

Հետազոտության արդյունքում մշակվել են առաջարկություններ, որոնք շուկայի մասնակիցների համար կարող են հնարավորություն ստեղծել հաղթահարել ստեղծված իրավիճակը, երբ գովազդային շուկայի որոշ մասնակիցներ գրավում են գերակշիռ դիրք: Հաշվի առնելով միջազգային փորձը, առաջարկվում է գովազդային շուկայի մասնակիցներից ստեղծել գովազդային ինդուստրիալ կոմիտե, հեռուստալսարանը չափող կազմակերպության համար անցկացնել անկախ աուդիտ եւ այդ կազմակերպության գործունեությունը մշտապես պահել ինդուստրիալ կոմիտեի վերահսկողության ներքո: Հաշվի առնելով գովազդային շուկայում նոր փոփոխությունները, երբ հեռուստագովազդը վաճառվում է նաև վարկանիշային միավորներով, առաջարկվում են օրենսդրական փոփոխություններ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» եւ «Գովազդի մասին» ՀՀ օրենքներում, որոնք կարտացոլեն առկա իրողությունները: Առաջարկվում է նաև օրենսդրական կարգավորել լրատվական կայքերի գործունեությունը, ինչը հնարավորություն կտա հստակեցնել նրանց գովազդային մուտքերը եւ ֆինանսական գործունեությունը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի լրատվական դաշտում վերջին տարիներին ընթանում է ենթակառուցվածքների ստեղծման գործընթաց, որպեսզի գովազդային շուկան համապատասխանեցվի ժամանակակից չափորոշիչներին՝ տեղական եւ միջազգային գովազդատուներին անհրաժեշտ մակարդակի ծառայություն մատուցելու եւ ֆինանսական ներհոսքերը ավելացնելու, դրանով իսկ լրատվամիջոցների անկախությունը, հետաքրքիր ու բազմազան բովանդակություն ապահովելու եւ շուկայական մրցակցությունը խթանելու համար: Միաժամանակ, գովազդային ենթակառուցվածքների ստեղծմանը զուգընթաց, նկատվում է միտում, երբ գովազդային շուկային առընչվող որոշակի մանիպուլացիաները հանգեցնում են շուկայի նկատմամբ վերահսկողության, եւ ժամանակակից գործիքները շուկան զարգացնելու փոխարեն, շուկայի որոշ մասնակիցներին հնարավորություն են տալիս ձեռք բերել գերակշիռ դիրք, դրանով իսկ փորձելով մյուսներին թելադրել խաղի կանոններ:

1990-ականների վերջերից Հայաստանի գովազդային շուկա սկսեցին մուտք գործել միջազգային բրենդների գովազդները: Այդ գովազդները սովորաբար իրականացվում էին միջազգային գովազդային ընկերությունների միջոցով, եւ միջազգային գովազդատուների մուտքը պատճառ դարձավ միջազգային գովազդային ընկերությունների մուտքի: Միջազգային ընկերությունները փորձեցին կանոնակարգել շուկան, մտցնել ինդուստրիային հատուկ կանոնները: Միաժամանակ, միջազգային գովազդատուները պահանջում էին իրենց գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքի առկայություն, եւ աստիճանաբար այդ ենթակառուցվածքը սկսեց ձեւավորվել:

2005 թվականից ի վեր Հայաստանում իրականացվում է հեռուստաալիքների մոնիթորինգ և հեռուստալսարանի չափման ուսումնասիրություններ: Նշված ժամանակահատվածում 3 տարբեր ընկերություններ իրականացրել են հեռուստալսարանի չափման ուսումնասիրություններ: 2005 թվականին նման ուսումնասիրություն Հայաստանում սկսեց իրականացնել Էյ Ջի Բի Նիլսեն (AGB Nielsen) ընկերությունը, իսկ 2008 թ. զուգահեռ շուկա մտավ նաև Ջի Էֆ Քեյ (GFK) ընկերությունը: 2013թ Էյ Ջի Բի Նիլսենի սեփականատերերը որոշեցին փակել բիզնեսը Հայաստանում: Իսկ 2016 թվականի հունվարի 1-ից Ջի Էֆ Քեյ շվեյցարական հետազոտական ընտանիքի արտոնագրով աշխատող «Տելեմեդիակոնտրոլ» ՓԲԸ հայաստանյան ընկերությունը դուրս եկավ շուկայից: Ջի Էֆ Քեյ ընկերությունը ցանկություն չհայտնեց հավելյալ և բավականին մեծ ներդրումներ անել Հայաստանում և արդիականացնել սարքավորումներն ու տեխնոլոգիան՝ դրանք համապատասխանեցնելով թվային ազդանշանի չափմանը, այդ իսկ պատճառով «Տելեմեդիակոնտրոլը» ընկերությունը հեռացավ շուկայից: Նրա փոխարեն հեռուստալսարանի չափման աշխատանքները սկսեց իրականացնել «Ադմոսֆեր-Արմենիա» ՓԲԸ նորաստեղծ մասնավոր ընկերությունը, որի գործընկերը «Նիլսեն Ադմոսֆեր» չեխական չափողն

է՛¹ Արդյունքում՝ ստեղծվեց «Ադմոսֆեր Արմենիա» մասնավոր ընկերությունը, որն էլ ներկայումս հեռուստաչափումներ է իրականացնում, հնարավորություն ունի նաև չափել թվային ազդանշաններ:

2013թ. հեռուստագովազդի շուկայում մուտք գործեց նոր ենթակառուցվածքային տարր՝ սեյլզ հաուսը (sales house), որը մասնագիտանում է հեռուստաալիքների գովազդի վաճառքի բնագավառում՝ հանդես գալով որպես միջնորդ հեռուստաալիքների և գովազդատուների միջև: Այս համակարգը որոշ երկրներում հաջողությամբ կիրառվել է, սակայն Հայաստանի դեպքում սեյլզ հաուսը գնաց շուկայի մոնոպոլացման ճանապարհով եւ, որոշ հեռուստաալիքների համար ստեղծելով հարմարավետ պայմաններ, այն խիստ խտրական իրավիճակ ստեղծեց մյուսների համար:

Ռադիոգովազդի շուկան բավականաչափ փոքր է եւ այստեղ չկան շուկայական ենթակառուցվածքներ: Որոշ գովազդային ընկերություններ ինքնուրույն իրականացնում են մոնիտորինգ:

Վերջին 7-8 տարիներին, կապված ինտերնետի ավելի էժան, արագ ու հասանելի դառնալու հանգամանքների հետ, Հայաստանում կտրուկ աճ ապրեց ինտերնետ օգտագործողների թիվը եւ հետեւաբար՝ ինտերնետ գովազդի նշանակությունը: 2015 թվականից համացանցային գովազդի բնագավառում Դի Ջի Սեյլզ ընկերությունն է հանդես գալիս որպես սեյլզ հաուս: Միաժամանակ, այս ընկերությունը հանդես է գալիս որպես գովազդային գործակալություն, եւ կարիք կա տարբերակելու կազմակերպության այդ գործունեության բնագավառները: Բավականին կարճ ժամանակահատվածում Դի Ջի Սեյլզ ընկերությունը՝ օգտագործելով իր երկակի դիրքը, ինչպես նաև որոշ զեղչային գործիքներ, կարողացավ հասնել գերիշխող դիրքի:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեջ առանձին ուսումնասիրվել են Հայաստանի գովազդային շուկան հեռուստատեսության, ռադիոյի եւ համացանցային հարթակների համար՝ շուկայի մասնակիցների փոխկապակցվածության եւ շուկայում գերակշիռ դիրք ձեռք բերելու տեսանկյունից: Յուրաքանչյուր լրատվամիջոցի համար ընդունված մեդիաչափումների եւ մոնիտորինգի մեթոդաբանության հիման վրա, 2016 թվականի հունվար-մայիս ամիսների համար ուսումնասիրվել է շուկայի մասնակիցների բյուջեն եւ համամասնությունը գովազդային շուկայում: Հետազոտության ընթացքում հաշվարկները կատարվել են գովազդի սակագների հիման վրա եւ հաշվի չեն առնվել տարբեր տիպի ոչ սակագնային զեղչերը այն մոտարկմամբ, որ հարաբերությունները շուկայական են և ենթադրվում է, որ տրվող զեղչերը նույնպես նույն կարգի են, այնպես, որ բյուջեների հարաբերակցությունը մնում է նույնը:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¹ Թվայնացվող հեռուստատեսությունը նոր չափող կունենա, <http://www.media.am/admosphere-armenia>

Հեռուստալսարանի չափումները իրականացվում են միայն քաղաքային բնակչության շրջանում հատուկ չափող սարքերի միջով: Ինչպես նշվեց, 2016 թվականից այդ չափումները իրականացնում է «Ադմոսֆեր Արմենիա» ընկերությունը: Հեռուստանախասիրությունների չափման մեթոդաբանական հիմքում ընկած է պանելային ուսումնասիրությունների մեթոդը, որը ենթադրում է միևնույն սոցիալական օբյեկտի, այս դեպքում՝ տնային տնտեսության երկարատև պարբերական ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունում ներգրավված տնային տնտեսություններն ընտրվում են տարեկան պարբերականությամբ անցկացվող հիմնարար հետազոտության արդյունքում ստացվող և ազգային վիճակագրական ծառայության կողմից պաշտոնապես տրամադրվող տվյալների համադրման հիման վրա: Հաշվի են առնվում այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են տնային տնտեսության անդամների քանակը, տնտեսությունում առկա սարքին հեռուստացույցերի քանակը, տնային տնտեսության անդամների սեռը, տարիքը, կրթությունը, զբաղվածությունը, ընդհանուր միջին ամսեկան եկամուտը: Տնային տնտեսության հետ համագործակցության համար հաշվի են առնվում նաև մի շարք այլ պահանջներ, ինչպիսիք են, օրինակ, ընդունվող հեռուստատեսային ազդանշանի որակը (արտաքին ակեհավաքի առկայությունը), հեռուստատեսության, գովազդի, մարքեթինգի և հարակից այլ ոլորտներում չաշխատելը և այլն: Տնային տնտեսությունների հետ համագործակցությունը հիմնված է կամավորության, անանունության և հեռուստադիտման վրա չազդող փոխհատուցման սկզբունքների վրա:


ՀՀ քաղաքային ամբողջ բնակչությունից ընտրանքային համախմբության անցումը հիմնված է ներկայացուցչական հավանականային ընտրանքի սկզբունքի վրա: Տնային տնտեսությունների ընտրանքը պետք է ունենա նույն չափանիշները, ինչ Հայաստանի Հանրապետության քաղաքային բնակչությունը: Այսինքն, այս ընտրանքը համարվում է Հայաստանի մինի մոդելը եւ նրա վերաբերյալ հետեւությունները կարելի է տարածել ողջ երկրի քաղաքային բնակչության վրա: Այդ սկզբունքով ձևավորած ընտրանքը համարվում է ներկայացուցչական ընտրանք: Ներկայումս ընտրանքային համախմբությունը ներկայացուցչական է Հայաստանի Հանրապետության քաղաքային (21 քաղաք), 4 և ավելի բարձր տարիքային խմբին պատկանող բնակչության համար: Պանելի մեծությունը ընդհանուր առմամբ 350 տնային տնտեսություն է կամ 1400-1450 մարդ (հեռուստալսարանը չափող ընկերությունը չի տրամադրում ճշգրիտ տվյալներ), ընտրանքի մեծությունը 3000 տնային տնտեսություն է:

Ընտրանքում ներգրավված են հետևյալ քաղաքների բնակիչները՝ Երևան, Արագածոտնի մարզում՝ Աշտարակ և Ապարան քաղաքները, Արարատի մարզում՝ Արտաշատ և Մասիս քաղաքները, Արմավիրի մարզում՝ Արմավիր և Վաղարշապատ քաղաքները, Գեղարքունիքի մարզում՝ Գավառ և Սևան քաղաքները, Լոռու մարզում՝ Վանաձոր և Ստեփանավան քաղաքները, Կոտայքի մարզում՝ Հրազդան, Չարենցավան և Աբովյան քաղաքները, Շիրակի մարզում՝ Գյումրի և Արթիկ քաղաքները, Սյունիքի մարզում՝ Կապան, Մեղրի և Գորիս քաղաքները, Վայոց ձորի մարզում՝ Եղեգնաձոր քաղաքը, Տավուշի մարզում՝ Իջևան և Դիլիջան քաղաքները:

Ի տարբերություն նախորդ չափող կազմակերպությունների, «Նիլսեն Ադմոսֆեր» ընկերությունը չափում է նաև թվային ազդանշանները, ինչպես նաև այսպես կոչված տեսագրված եթերը (time shift): Այսպիսի չափումների անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանում թվային

հեռարձակման անցմամբ, ինչպես նաև քաղաքներում կաբելային հեռուստատեսության լայն տարածմամբ:

Հեռուստատեսային չափումների սխեմատիկ պատկերը



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մոնիթորինգը հանդիսանում է այն հիմքը, որով կատարվում են գովազդի համար վճարումները: Հեռուստատեսային մոնիթորինգը իրականացվում է եթերում գովազդային հոլովակների հեռարձակումը ճշտելու, հավաքած բույները եւ/կամ վարկանիշային միավորները հաշվելու համար: Հեռուստամոնիթորինգը իրականացվում է մոնիթորինգի փորձագետների կողմից երկու փուլով: Առաջին փուլի ժամանակ կատարվում է հեռուստահաղորդումների, գովազդների և գովազդային բլոկերի տիպաբանում և ամրագրում համակարգում: Այս փուլի տվյալները նախնական ստուգումից հետո հասանելի են եթերի հաջորդ օրը, մինչև ժամը 12:30: Երկրորդ փուլի ժամանակ կատարվում է գովազդային հոլովակների տիպաբանություն և ամրագրում համակարգում: Այս փուլի արդյունքները հասանելի են առաջին փուլից հետո, հաջորդ օրը կամ եթերից երկու օր անց, ոչ ուշ քան ժամը 12:30:

ՌԱԴԻՈՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում մի քանի փորձեր են ձեռնարկվել՝ իրականացնելու ռադիոլսարանի չափումներ: Սակայն լսարանի եւ շուկայի փոքր չափերի, ինչպես նաեւ՝ չափումների թանկության պատճառով ներկայումս Հայաստանում ռադիոլսարանի չափումներ չեն իրականացվում:

ՌԱԴԻՈՑԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռադիոյի մոնիթորինգի հիմքում ընկած է նույն մեթոդաբանությունը, ինչը որ հեռուստատեսության մոնիթորինգի դեպքում է: Ռադիոմոնիթորինգը իրականացվում է մոնիթորինգի փորձագետների կողմից, ովքեր կատարվում են ռադիոհաղորդումների, գովազդների և գովազդային բլոկերի տիպաբանում և ամրագրում համակարգում: Միակ տարբերությունն այն է, որ տվյալները տրամադրվում են շաբաթական մեկ անգամ՝ հինգշաբթի օրերին: Ռադիոյի մոնիթորինգը Հայաստանում 2012-2013թթ. իրականացրել է AGB Nielsen ընկերությունը, 2014 – 2015թթ. Gfk Nielsen-ը, իսկ 2016թ. այն իրականացնում է ԱդմոսֆերԱրմենիան:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԼՍԱՐԱՆԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համացանցը տարբերվում է ավանդական լրատվամիջոցներից լսարանի չափման մեթոդաբանության առումով, չափման համար անհրաժեշտ քանակական և որակական ցուցանիշների բազմազանությամբ, ինչպես նաև տեխնիկական լուծումներով: Այդ իսկ պատճառով ո՛չ Հայաստանում, ո՛չ այլ շուկաներում դեռևս չկա ինտերնետ լսարանի միասնական չափող:

Ժամանակին Հայաստանում գործում էր circle.am համակարգը, որը, ուսումնասիրելով Հայաստանի համացանցային հարթակների լսարանը, տրամադրում էր քանակական վիճակագրություն, ինչի հիման վրա կատարվում էր կայքերի դասակարգում: 2014 թվականին circle.am-ին փոխարինեց qanon.am կայքը, հետագայում counter.am, սակայն նշված նախագծերը տապալվեցին, քանի որ այդ բնագավառում կան միջազգային չափող ընկերություններ, որոնք հասանելի են Հայաստանում:

Հայաստանի գովազդային գործակալությունները իրենց աշխատանքի ընթացքում օգտվում են մի քանի ծրագրերի տվյալներից, որոնցից են՝ AdRiver, AdFox, www.similarweb.com և Google Analytics, եթե, իհարկե, հարթակների սեփականատերերից կամ գովազդատուներից ստանում են այդ կայքեր մուտք գործելու համապատասխան հասանելիությունը:

Տվյալ հետազոտության խնդիրների լուծման համար առավել նպատակահարմար է www.similarweb.com հարթակի տվյալների օգտագործումը, քանի որ այն հնարավորություն է

ընձեռում ստանալ կայքի այցելությունների, դիտումների և այլ ստանդարտ տվյալների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև կայքերի տրաֆիքի աշխարհագրությունը:

ՀԱՄԱՑԱՆՅԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համացանցի մոնիտորինգի համար տարբեր մասնագետների կողմից մշակվում են հատուկ ծրագրեր, սակայն դեռևս չկա վստահություն դրանց շահութաբերության վերաբերյալ: Այդ իսկ պատճառով դրանք այժմ պատրաստ եւ հասանելի չեն: Հայաստանում առայժմ համացանցային գովազդով զբաղվող ընկերությունները մոնիտորինգային ուսումնասիրությունները կատարվում են ձեռքով: Տվյալ հետազոտության համար ուսումնասիրվել է հայկական 70 կայքեր (կայքերի ցուցակը ներկայացված է հավելված 13-ում), շաբաթական հաճախականությամբ, որպես աղբյուր հիմք են հանդիսացել similarweb.com, AdRiver կայքերի տվյալները: Մոնիտորինգային պարամետրերի մեջ դիտարկվել են նաև գովազդատուների գովազդները՝ ըստ բնագավառի, կատեգորիայի, ապրանքանիշի, գովազդային հաղորդագրությունները, գովազդի տեղակայումը, չափը, ձևաչափը, պարբերական կրկնությունը, ցուցադրումները, գնման միավորը և տեղադրման գինը: Բոլոր հաշվարկները հիմնված են գնացուցակային գների վրա՝ առանց գեղչային քաղաքականության հաշվառման: Աշխատակիցը շաբաթական կտրվածքով այցելել է ցանկում ներառված կայքերը՝ լրացնելով տեղեկատվությունը ըստ վերոհիշյալ կետերի բոլոր կայքերում առկա բոլոր գովազդատուների համար:

Ոչ-հայկական հարթակները, այդ թվում նաև սոցիալական կայքերը, ինչպեսիք են՝ facebook.com, odnoklasniki.ru, vkontakte.ru, եւ այլն, հետազոտության առարկա չեն եղել, քանի որ ուսումնասիրվել են միայն հայկական լրատվամիջոցները:

ՀԱՄԱՑԱՆՅԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Համացանցային գովազդի հաշվարկման հիմքում՝ ելնելով տվյալ կայքի գնային քաղաքականությունից, ընկած են երկու մոտեցում: Առաջինը դա ֆիքսված բաններային տարածքների վաճառք իրականացնող կայքեր են, երբ յուրաքանչյուր գովազդատուի համար ֆիքսվում է բանների տարածքը և ռոտացիան: Հիմնվելով similarweb.com կայքի տրամադրած վիճակագրության վրա՝ հաշվարկվում է գովազդի ցուցադրությունների մոտավոր ծավալը: Համապատասխան ռոտացիայի համար լրացվում է նաև գնացուցակային գին: Երկրորդը դեպքում, ըստ գովազդ տեղադրած էջերի ցուցադրությունների, վաճառքային մոդելով աշխատող կայքեր են, որոնք, որպես կանոն, ունենում են վաճառքի փաթեթներ՝ հստակ նշված ցուցադրություններով: Կայքի մնացորդային ցուցադրությունները վաճառվում են օնլայն հարթակներում: Գովազդի ցուցադրությունների հաշվարկը սկզբնականորեն հիմնվում է տվյալ գովազդային գոտիների մինիմալ փաթեթի վրա: Եթե գովազդի ինտենսիվությունը՝ ելնելով կայքի էջերի դիտումներ և գովազդի ռոտացիա հարաբերակցությունից, ավելի մեծ է, ապա մինիմալին հաջորդող փաթեթն է հաշվարկվում:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Գովազդային շուկայի մենաշնորհման ուսումնասիրության համար հետազոտվել է նաև շուկայի մասնակիցների սեփականատերերի ցուցակը: Այդ նպատակի համար պարզել ենք լրատվամիջոցների իրավաբանական անունները եւ հարցում ենք կատարել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (ԻԱՊՌԳ): Ամբողջական ցուցակը ներկայացված է հավելված 1-ում եւ 2-ում:

Որոշ խոշոր մասնակիցներ ունեն օֆշորային գոտիներում գրանցված սեփականատերեր, որոնց վերաբերյալ հնարավոր չի եղել տեղեկատվություն ստանալ, դրանք են ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ, Փաբլիսիս Հեփթա, Ուրարտու Մեդիա Իքսչենջ, Սթարկոմ Արմենիան ընկերությունները: Որոշ մասնակիցների իրավաբանական ձևը փակ բաժնետիրական ընկերություններ են, որոնց վերաբերյալ ոչ միշտ է հնարավոր լինում տեղեկատվություն ստանալ, դրանց թվում են «Մարգահամերգային համալիր» ՓԲԸ-ն (Արձագանք ռադիոյի հիմնադիր), «Հուսաբեր» ՓԲԸ-ն (Երկիր Մեդիա հ/ը հիմնադիր): Ուսումնասիրվել են նաև տեղեկատվության այլ հնարավոր աղբյուրներ, մասնավորապես, մեդիա գործակալությունների պաշտոնական կայքերը: Մեծ ծավալի օգտակար ինֆորմացիա է ստացվել ՊանԱրմենիան Մեդիա Գրուպի պաշտոնական կայքից:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հեռուստատեսային գովազդի շուկան բարձր ինստիտուցիոնալացված է, անմիջական վճարողից բյուջեները անմիջական կատարողին են հասնում հիմնականում անցնելով երկու միջանկյալ օղակների միջով՝ գովազդային գործակալությունների եւ սեյլս հաուսի (տես հավելված 3-ը): Եթե գովազդային գործակալությունների դերը ակնհայտ է որպես գովազդային արշավների կազմակերպող, արշավի արդյունավետությունն ապահովող եւ վերահսկող, ապա սեյլս հաուսի ստեղծած արժեքն այդքան ակնհայտ չէ գովազդատուների տեսանկյունից: Միաժամանակ, որոշ հեռուստաընկերությունների տեսանկյունից, որոնք չունեն մարքեթինգային ծառայությունների զարգացած բաժիններ, այն կարող է կարելու դեր խաղալ գովազդատուներ գտնելու եւ ֆինանսավորում ապահովելու առումով: Հարակից կարելու նշանակություն ունի նաև հեռուստաչափումներ իրականացնող ընկերության գործունեությունը, որը չափում է հեռուստաալիքների եւ հաղորդումների վարկանիշները, իրականացնում է մոնիթորինգ, ինչպես նաև տրամադրում է այլ օգտակար տեղեկատվություն:

Վաճառողի շուկա (sellers' market)

Վաճառողի շուկայի մասնակիցներ կարելի է համարել բոլոր նրանց, ովքեր անմիջականորեն վճարում են հեռուստաալիքներին: Դրանց թվում են գովազդային գործակալությունները եւ գովազդատուները, երբ նրանք անմիջականորեն շփվում են հեռուստաալիքների հետ, ինչպես նաև սեյլս հաուսը: Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլս հաուսը մուտք է գործել հայաստանյան շուկա 2013 թվականին: Այս ընկերությանն են պատկանում հինգ հեռուստաալիքներով՝ Արմենիա Թի Վի, Ա Թի Վի, Արմյուզ, Երկիր Մեդիա, Շանթ, գովազդային վաճառքի բացառիկ իրավունքները: Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլս հաուսը չի աշխատում գովազդատուների հետ ուղիղ, այլ բացառապես գովազդային գործակալությունների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացված են հեռուստաալիքների գովազդային բյուջեները ըստ գնացուցակային գների 2016 թ. հունվար-մայիս ամիսների համար:

2016 գովազդային բյուջեները ըստ գնացուցակային գների, ՀՀ դրամով							
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	ընդամենը	միայն Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սելյս հաուսի բաժինը
Արմենիա Թի Վի	242,375,840	354,697,200	414,018,680	314,979,960	401,049,560	1,727,121,240	74%
Շանթ	256,141,280	330,535,480	389,360,160	306,698,640	386,708,680	1,669,444,240	
Ա. Թի Վի	174,482,000	226,318,400	251,302,000	202,381,600	221,688,400	1,076,172,400	
Արմնյուզ	181,033,560	220,257,080	278,302,960	155,083,360	178,249,120	1,012,926,080	
Երկիր մեդիա	116,606,720	148,306,560	181,415,000	83,957,280	98,018,440	628,304,000	
Հ1	45,648,316	43,321,088	57,555,360	55,241,884	68,368,276	270,134,924	
Հ2	264,578,880	231,440,880	240,708,720	162,266,400	227,613,600	1,126,608,480	
Ար	22,773,720	21,024,260	21,916,260	23,355,700	27,366,520	116,436,460	
Կենտրոն	85,723,000	79,701,300	81,199,400	81,373,300	97,315,900	425,312,900	
Դար 21	34,325,400	35,102,400	33,660,900	25,416,600	29,013,300	157,518,600	
Արարատ	17,465,750	17,513,250	18,077,750	20,058,500	20,166,500	93,281,750	
Ընդամենը						8,303,261,074	

Ինչպես երևում է բերված աղյուսակից, հունվար-մայիս ամիսների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սելյս հաուսը միջինում տիրապետում է հեռուստաալիքների համախառն բյուջեների 74%-ին (ավելի մանրամասն տվյալները տես հավելված 4-ում):

Հավելված 5-ում ներկայացված է հատված Հակամենաշնորհային կարգավորման մասին ՀՀ օրենքից: Համաձայն այդ օրենքի, «Տնտեսական մրցակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով

մենաշնորհ կամ գերիշխող դիրք է համարվում մենաշնորհային այն դիրք ունեցողը, որը որպես իրացնող կամ ձեռք բերող չունի մրցակից: Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը: Այստեղից երևում է, որ «Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզը» սեյլս հաուսը շուկայում ունի ակնհայտ գերակշիռ դիրք եւ չարաշահում է այդ դիրքը: Հավելված 6-ում բերված է Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլս հաուսի պաշտոնական պայմանները, որտեղից երևում է, որ այս կառույցը լուրջ ջանքեր է գործադրում իր կառույցի մեջ չմտնող հեռուստաալիքներին շուկայից դուրս մղելու համար: Օրինակ, միայն իր կազմի մեջ ընդգրկված հեռուստաալիքներով գովազդ հեռարձակելու համար այն կիրառում է մինչև 35% զեղչի մեխանիզմը, ինչը նշանակում է, որ գովազդատուները երբեք չեն գնա անիմաստ թանկացման եւ այս հինգ հեռուստաալիքներով գովազդ տեղադրելուց (որոնց թվում են են ամենադիտվող երեք հեռուստաալիքները՝ Արմենիա Թի Վի, Շանթ, Ա Թի Վի) իրենց փաթեթներում չեն ներառի այլ հեռուստաալիքներ, կամ պետք է գնան տարբեր խորամանկությունների՝ մյուս հեռուստաալիքներով գովազդ տեղադրելու համար: Պետք է նշել, որ հեռուստագովազդային շուկայում՝ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլս հաուսի հայտնվելով, որեւէ դրական տեղաշարժ տեղի չունեցավ, քանի որ տվյալ սեյլս հաուսը չստեղծեց հավասար պայմաններ հեռուստատեսային գովազդի շուկան զարգացնելու համար, այլ սկսեց թելադրել իր գերակշիռ դիրքից:

Կարելուր հանգամանք է նաեւ այն, որ Հայաստանի Հանրապետության գովազդի մասին օրենսդրությունը կարգավորում է հեռուստագովազդի վաճառքը բույներով, այլ ոչ վարկանիշային միավորներով: Այսինքն, ֆորմալ առումով, վաճառված բույների առումով կարծես մենաշնորհ չկա, մինչդեռ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզի սեյլս հաուսի կողմից վերահսկվող հեռուստատեսային գովազդի բյուջեների տեսանկյունից, մենաշնորհը ակնհայտ է: Այս հանգամանքը խոսում է նաեւ համապատասխան բնագավառներում օրենսդրական բացի մասին: Վերլուծության առարկա է դիտարկվել հեռուստատեսային ալիքների կողմից վաճառված եթերաժամը՝ արտահայտված բույներով, ինչպես նաև վաճառված համախառն վարկանշային ծավալները, արտահայտված կշռված համախառն վարկանիշային միավորներով (wGRPs): Երկու չափորոշիչի՝ բույների և վարկանիշային միավորների դիտարկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ «Գովազդի մասին օրենքի» հոդված 9-ը սահմանում է գովազդի թույլատրելի ծավալը բույներով. առևտրային գովազդի ծավալը չի կարող գերազանցել մեկ ժամում 14 բույեն, մինչդեռ որոշ հեռուստաալիքներ, որոնցից են Արմենիա, Շանթ, Ա Թի Վի, Արմնյուզ և Երկիր Մեդիա հեռուստաալիքները վաճառում են իրենց եթերը վարկանշային միավորներով՝ wGRPs-ներով: Մինչդեռ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլս հաուսը, որը իրականացնում է նշված հեռուստաալիքների գովազդային եթերի վաճառքը, փաստացի հանդես է գալիս մենաշնորհ դիրքերից՝ տրամադրելով մինչև 35% զեղչ այսպես կոչված <էքսկլուզիվ տեղադրման համար> միայն նշված հինգ հեռուստաալիքներով, ինչի պատճառով գովազդատուների մեծամասնությունը ստիպված են լինում ընտրել միայն նշված հեռուստաալիքները:

Այսպիսով, համեմատելով բույեով վաճառք իրականացնող հեռուստաալիքները վարկանշային միավորներ վաճառող հեռուստաալիքների հետ, ակնհայտ է դառնում, որ մենաշնորհային դիրքի շնորհիվ՝ Արմենիա, Շանթ, Ա Թի Վի, Արմնյուզ և Երկիր Մեդիա հեռուստաալիքները վաճառում են օրենքով թույլատրելի գովազդային ծավալների (արտահայտված բույներով) միջինում 50%, այն դեպքում, երբ մնացած հեռուստաալիքներին հաջողվում է իրականացնել գովազդային ծավալների

վաճառքի ընդամենը 25-30%: Ավելին, եթե դիտարկելու լինենք prime time ժամանակահատվածը՝ երեկոյան ժամը 18:00-ից մինչև ժամը 24:59-ը, ապա ստացվում է, որ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սելյս հաուսը կարողանում է վաճառել հինգ նշված հեռուստաալիքների մինչև 70% գովազդային ծավալը, մինչդեռ մնացած հեռուստաալիքները նույն ժամանակահատվածում վաճառում են գովազդային ինվենտարի միայն ընդամենը 30-35%:

Դիտարկելով վաճառված հեռուստատեսային գովազդային թույլատրերի ծավալները ամիս առ ամիս՝ հանգում ենք հետևյալ օրինաչափությանը՝ ողջ վաճառված հեռուստատեսային գովազդային թույլատրերի 64%-ը պատկանում է հինգ հեռուստաալիքներին՝ Արմենիա, Շանթ, Ա Թի Վի, Արմնյուզ և Երկիր Մեդիա:

Վաճառված հեռուստագովազդային ծավալները ըստ համախառն գովազդային թույլատրերի 2016 թ. հունվար-մայիս ամիսների համար

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս
Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ	64%	65%	68%	62%	61%
Այլ հեռուստաալիքներ	36%	35%	32%	38%	39%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%

Եթե դիտարկենք վաճառված գովազդային ծավալները ոչ թե թույլատրերով, այլ համախառն վարկանշային միավորներով՝ wGRPs-ով, ապա կստացվի, որ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սելյս հաուսին պատկանող հինգ հեռուստաալիքները վաճառել են հասանելի ծավալի 81%, այն դեպքում, երբ այլ հեռուստաալիքներին չի հաջողվել վաճառել նույնիսկ 20%:

Վաճառված հեռուստագովազդային ծավալները ըստ համախառն վարկանշային միավորների, 2016 թ. հունվար- մայիս ամիսների համար

	Վաճառքը wGRP'-ով		
	Վաճառված wGRP	Հասանելի wGRP	% վաճառված
Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ	63 867,79	112591,9834	81%
Այլ հեռուստաալիքներ	14 923,71	61156,68475	19%
Ընդամենը	78791,5	173748,6682	

Նշված իրավիճակը գովազդային ծառայություններից օգտվողների համար հնարավոր է, որ ստեղծում է բարենպաստ պայմաններ, սակայն այն սահմանափակում է շուկայում նմանատիպ ծառայություններ իրականացնող ընկերություններին լիարժեք և ամբողջական իրենց ծառայություններն առաջարկելուն, ինչի հետևանքով գովազդատուների մեծամասնությունը օգտվում է Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սելյս հաուսի ծառայություններից՝ հնարավորություն տալով այս կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության տարածքում զբաղեցնել գերիշխող դիրք:

Գնորդի շուկան (buyers' market)

Այս շուկայում որպես գնորդներ հանդես են գալիս հեռուստաալիքները: Ստորև բերված աղյուսակից երևում է, որ ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ հոլդինգի (ՊԱՄԳ) մեջ մտնող հեռուստաընկերությունները տիրապետում են շուկայում բյուջեների 46%-ին, ինչը նշանակում է գերակշիռ դիրք:

Հեռուստաալիքների գովազդային բյուջեները 2016թ. հունվար-մայիս ամիսներին, ՀՀ դրամով							
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	Ընդամենը	ընդամենը ՊԱՄԳ
Արմենիա Թի Վի	242,375,840	354,697,200	414,018,680	314,979,960	401,049,560	1,727,121,240	3,816,219,720 46%
Ա.Թի Վի	174,482,000	226,318,400	251,302,000	202,381,600	221,688,400	1,076,172,400	
Արմնյուզ	181,033,560	220,257,080	278,302,960	155,083,360	178,249,120	1,012,926,080	
Շանթ	256,141,280	330,535,480	389,360,160	306,698,640	386,708,680	1,669,444,240	
Երկիր մեդիա	116,606,720	148,306,560	181,415,000	83,957,280	98,018,440	628,304,000	
Հ1	45,648,316	43,321,088	57,555,360	55,241,884	68,368,276	270,134,924	
Հ2	264,578,880	231,440,880	240,708,720	162,266,400	227,613,600	1,126,608,480	
Ար	22,773,720	21,024,260	21,916,260	23,355,700	27,366,520	116,436,460	
Կենտրոն	85,723,000	79,701,300	81,199,400	81,373,300	97,315,900	425,312,900	
Դար21	34,325,400	35,102,400	33,660,900	25,416,600	29,013,300	157,518,600	
Արարատ	17,465,750	17,513,250	18,077,750	20,058,500	20,166,500	93,281,750	
Ընդամենը						8,303,261,074	

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հաշվի են առնված գովազդային բյուջեները մաքուր, գնացուցակային տեսքով, մինչդեռ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլս հուսի մեջ չմտնող հեռուստաընկերությունների դեպքում, սեփականատերերի այլ ընկերությունների գովազդը, ինչպես նաև բարտերային գործարքները մեծ կշիռ ունեն (մինչև 75%), ինչի մանրամասն հաշվարկի դեպքում այս ցուցանիշը էլ ավելի կբարձրանա:

ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ հոլդինգի մեջ մտնող հեռուստաալիքների գերակշիռ դիրքը նախ եւ առաջ պայմանավորված է նրանց բարձր հեռուստավարկանիշներով: Միաժամանակ, շուկայում որոշակի անվստահություն կա հեռուստաչափումներ իրականացնող Տելեմեդիակոնտրոլ (այժմ՝ Ադմոսֆեր-Արմենիա) ընկերության տրամադրած տվյալների նկատմամբ ինչպես մեթոդաբանության, այնպես էլ ընտրանքի կառուցման եւ ծրագրային ապահովման տեսանկյունից: «Ադմոսֆեր Արմենիա» կազմակերպության աշխատանքը անհրաժեշտ չափով չի բացահայտվում

շահագրգիռ կողմերին, ինչն էլ հարուցում է այս մտահոգությունները: Թերեւս այս իրավիճակից խուսափելու համար է, որ Գովազդատուների համաշխարհային ֆեդերացիան (World Federation of Advertisers) մշակել է 10 կետից բաղկացած առաջարկների փաթեթ, որը հրապարակված է Եվրոպական հեռահաղորդողների միության (European Broadcasters Union) www.ebu.ch կայքում (տես հավելված 7-ը): Այդ պահանջների թվում են տվյալների վավերականությունը, հուսալիությունը, ողջ շուկան ծածկելու հնարավորությունը, մեթոդաբանության ամբողջական թափանցելիությունը, օգտագործողներին հավասար մուտքի հնարավորությունը, արդար գինը, որակի վերահսկողությունը եւ այլն: Հայաստանի դեպքում «Ադմոսֆեր Արմենիա» ընկերության աշխատանքը հեռու է այդ չափորոշիչներից: Ընկերության ընտրանքի հետ կապված կան մեծ խնդիրներ, քանի որ ընտրանքը հեռու է ներկայացուցչական լինելուց, կան ծրագրային սխալներ, ինչպես նաև չի ապահովում հնարավոր թափանցիկությունը շահառուների համար:

Վստահելության պակասը հեռուստալսարանը չափող ընկերության տվյալների նկատմամբ հանգեցրել է նրան, որ հեռուստաընկերությունները դադարել են հեռուստավարկանիշների համար պայքարել: Եթե նախկինում հայկական հեռուստաթերթում կային այնպիսի միջազգային հեղինակավոր հաղորդումները, ինչպես «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր», «Հայաստանի ձայնը» եւ այլ հեռուստահաղորդումներ, օտարեկրյա հեռուստասերիալներ, ապա այժմ գերակշռող տեղական հեռուստասերիալները եւ նրանց կրկնություններն են, որոնք արտադրական քիչ ծախսեր են պահանջում:

ՌԱՂԻՈԳՈՎԱԶՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ռադիոգովազդի շուկան մեծ չէ, մոտավոր հաշվարկներով այն կազմում է հեռուստաշուկայի ընդամենը 6.5%-ը (տես հավելված 8-ը), միջին հաշվով այն կազմում է ամսեկան շուրջ 7 մլն. դրամ յուրաքանչյուր ռադիոալիքի համար (առանց գեղչերի), այդ պատճառով էլ այն մոնոպոլիզացնելու ջանքեր չեն կիրառվել: Այստեղ գովազդի վաճառքն իրականացվում է 2-5 ռադիոկայանից բաղկացած խմբերով (տես հավելված 12), որոնք ֆորմալիզացված չեն: Այդ խմբերը պայմանականորեն կարելի է անվանել Երևան ՖՄ-ի խումբ (Երևան ՖՄ, Հանրային Ռադիո, Ավտո Ռադիո, Բմ Ռադիո), Ռադիո Վանի խումբ (Ռադիո Վան, Ռուսկոյե Ռադիո, Ռադիո Հայ, Հայ ՖՄ, Հիթ ՖՄ), Մեդիա Ֆոկուսի խումբ (Ռադիո Արձագանք, Սպուտնիկ), ՊանԱրմենիան Մեդիա Գրուպի խումբ (Ռադիո Ջան, Արմ ՖՄ, Լավ Ռադիո): Ռադիո Շանսոնը եւ Ռադիո Ավրորան ինքնուրույն են վաճառում իրենց ռադիոթերթը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ռադիոգովազդի շուկայում գերակշիռ դիրք ունեցող խաղացողներ չկան:

ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առցանց գովազդի շուկան բավական դինամիկ զարգացող շուկա է, այստեղ առկա են բազմաթիվ շուրջ հարյուր հարթակ, առկա են հետազոտության ու չափման տարբեր գործիքներ, մոնիթորինգը դեռեւս իրականացվում է ձեռքով, բայց շուկայի հնարավորությունների զարգացման դեպքում այստեղ հնարավոր են նաեւ մոնիթորինգային ծրագրեր:

Առցանց գովազդի շուկային բնորոշ է նաև այն, որ գովազդային շուկայի մասնակիցները ֆինանսապես թույլ են, չունեն նաև անհրաժեշտ մարքեթինգային ունակություններ: 2015 թվականին առցանց գովազդի շուկայում Դի Ջի Սեյլզ ընկերությունը սկսեց գնել որոշ առցանց հարթակներում գովազդի տեղադրման բացառիկ իրավունքները եւ հայտարարեց իր մասին՝ որպես սեյլս հաուսի: Ներկայումս Դի Ջի Սեյլզ ընկերությունը տիրապետում է առցանց գովազդային շուկայի ամենավարկանիշային մի շարք հարթակներում, ինչպեսին են՝ news.am, tert.am, lragir.am, panarmenian.net լրատվական-վերլուծական կայքերում գովազդի տեղադրման բացառիկ իրավունքի: Դի Ջի Սեյլզ ընկերությունը հանդես է գալիս եւ՝ որպես սեյլս հաուս, եւ՝ որպես գովազդային գործակալություն: Որպես գովազդային գործակալություն այն իր հետ համագործակցող առցանց կայքերի համար կարող է ունենալ ամենամեծ գեղջերը եւ ըստ այդմ՝ լինել մրցակցությունից դուրս շատ գովազդատուների համար: Լինելով սեյլս հաուս՝ այս ընկերությունը առանձնապես շահագրգիռ չէ աշխատել ցածր վարկանիշային եւ նոր շուկա մտնող կայքերի հետ: Ստացվում է, որ Դի Ջի Սեյլզ ընկերությունը, մեծ հաշվով, առցանց գովազդային շուկայի զարգացման խնդիրը չի լուծում, քանի որ նախընտրում է աշխատել արդեն կայացած կայքերի հետ, եւ, լինելով գերակշիռ դիրքում, խոչընդոտում է գովազդային բյուջեների հոսքերին դեպի նոր մուտք գործող կայքեր:

Ինչպես երևում է ներքևի աղյուսակից, 2016 թվականի մայիսին Դի Ջի Սեյլզ ընկերությունը տիրապետել է առցանց գովազդային շուկայի բյուջեների 41.3%-ին, ինչը ակնհայտորեն գերիշխող դիրք է համարվում (ավելի մանրամասն տես հավելված 9): Դի Ջի Սեյլզի ընկերության կողմից Հայաստանի առցանց գովազդի շուկայում մասնաբաժնի դինամիկան 2016թ. 5 ամիսների համար հետևյալն է.

	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս
Դի Ջի Սեյլզ	28,7%	32,2%	39,7%	38,2%	41,3%

Հիմք ընդունելով առցանց գովազդի հաշվարկման հիմքում ընկած երկու մոտեցումները՝ ելնելով տվյալ կայքի գնային քաղաքականությունից՝ ֆիքսված բաններային տարածքների վաճառք իրականացնող կայքեր եւ ըստ դիտումների գովազդ վաճառող կայքեր, ուսումնասիրություն արդյունքում պարզվել է, որ Դի Ջի Սեյլզ ընկերությունը շուկայում գրավում է գերիշխող դիրք: Այն պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես, հայկական տիրույթի առաջատար կայքերի մեծամասնությունը մտնում են այս խմբի կազմի մեջ: Թոփ 20 հայկական կայքերից (ըստ similarweb.com) վեցը մտնում են այս ընկերության կողմից բացառիկ վաճառվող կայքերի մեջ, որոնք են՝ news.am, tert.am, lragir.am, rate.am, armfootball.am կայքերը: Դի Ջի Սեյլզ ընկերության կազմի մեջ է մտնում նաև առցանց գովազդային գործակալություն:

Այսպիսով, Դի Ջի Սեյլզը ընկերությունը գրավում է առցանց գովազդային շուկայի մեկ երրորդից ավելին, ինչը գերիշխող դիրքի նշան է: Այս ընկերությունը իր գնացուցակում առաջարկում է իր կայքերում բացառիկ տեղադրման համար մինչև 25% գեղջ: Նշված առաջարկը ծառայություններից օգտվողների համար ստեղծում է բարենպաստ պայմաններ, սակայն այն սահմանափակում է առցանց գովազդային շուկայում նմանատիպ ծառայություններ իրականացնող ընկերություններին լիարժեք և ամբողջական իրենց ծառայություններն առաջարկելուն, ինչի հետևանքով շատ գովազդատուներ օգտվում են Դի Ջի Սեյլզ ընկերության ծառայություններից՝ հնարավորություն

տալով այս ընկերությանը Հայաստանի առցանց գովազդային շուկայում զբաղեցնել գերիշխող դիրք: Ընկերությունը օգտագործում է իր գերիշխող դիրքը՝ գեղչերի կոշտ քաղաքականություն կիրառելով, փորձելով սահմանափակել մյուս կայքերով գովազդի տեղադրման հնարավորությունները (հավելված 11-ում ներկայացված է գնացուցակը):

Պետք է նաև նշել առցանց լրատվամիջոցների դաշտում օրենսդրական կարգավորման բացակայությունը, որի մասին բազմիցս ահազանգել են լրատվամիջոցների ներկայացուցիչները:² Օրենսդրական բացը ֆինանսական տեսանկյունից վերաբերում է մի շարք կետերի, մասնավորապես, չկա հեղինակային իրավունքի հետ կապված կարգավորում, մասնավորապես չգրանցված կայքերի կողմից, ինչի հետևանքով նրանք օգտագործում են այլ լրատվամիջոցների ստեղծած նյութերը եւ դրանցով գովազդային գումարներ աշխատում: Իրավաբանորեն չգրանցված կայքերը աշխատում են առանց հարկային կարգավորման եւ ի սկզբանե հայտնվում ավելի նախընտրելի պայմաններում: Չկա որեւէ օրենսդրական կարգավորում ոչ միայն գովազդային հարթակների չափերի, ռոտացիայի եւ այլ պարամետրերի վերաբերյալ, այլեւ բովանդակության, մասնավորապես, պարզ չէ, թույլատրելի է արդյո՞ք ծխախոտի եւ ալկոհոլի գովազդը ինտերնետային հարթակներում:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փոխկապակցված սեփականատերերի վերլուծությունը, ըստ ԻԱՊՌԳ-ն տվյալների, չեն վերհանել տարբեր լրատվամիջոցների սեփականատերերի փոխկապակցվածության վերաբերյալ ակնհայտ տեղեկատվություն: Կան որոշ բացառություններ, օրինակ «Շարմ» գովազդային ընկերության 50%-ի բաժնետերը նաեւ հանդիսանում է Հանրային հեռուստատեսության գործադիր տնօրենը: Սակայն, հաշվի առնելով, որ Հանրային հեռուստատեսությամբ գովազդներ չեն ցուցադրվում, նման համընկումները էական ազդեցություն չեն թողնում գովազդային շուկայի վրա:

Գովազդային ենթակառուցվածքային ընկերությունների սեփականատերերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեռուստատեսային գովազդի սեյլս հաուս հանդիսացող Մեդիա Ինթերնեշնլ Մերվիսիզ ընկերության միակ սեփականատիրոջն է պատկանում նաեւ համացանցային գովազդի սեյլս հաուս հանդիսացող Դի Ջի Մեյլս ընկերության սեփականության 65%: Այս ընկերությունները փոխկապակցված են, եւ այս հանգամանքը հաստատում է նաեւ շուկայում տարածված այն լուրերը, որ, միայն այս երկու ընկերություններով գովազդ տեղադրելու դեպքում, ընկերությունները առաջարկում են լրացուցիչ գեղչեր՝ փորձելով կոնսոլիդացնել ողջ գովազդային շուկան իրենց ձեռքում:

Լրատվամիջոցների սեփականատերերի ցուցակը ամբողջական չէ, այնտեղ ներառնված չեն ՓԲԸ-ների եւ օՖշորային գոտիներում գրանցված սեփականատերերը: Միաժամանակ, Հայաստանում գործող խոշորագույն մեդիա միավորման՝ ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ ընկերության www.pamg.am կայքից տեղեկանում ենք, որ մի շարք լրատվամիջոցներ ընդգրկված են մեկ մեդիամիավորման մեջ: Հեռուստատեսությունների դեպքում դրանք են՝ Արմենիա Թի ՎԻ, Ա Թի Վի և Արմնյուզ Թի Վի

² Առցանց ԶԼՄ-ների դաշտի կարգավորում. անհրաժեշտություն ևս վտանգներ. <http://media-center.am/hy/1466161875>

հեռուստաընկերությունները: ԱՄՆ-ում այս հոլդինգը ներկայացված է նաև Պանարմենիան Թի Վի ընկերությամբ: Ռադիոընկերությունների դեպքում դրանք են Ռադիո ջանը և Լավ ռադիոն, առցանց կայքերի դեպքում Tert.am, Blognews.am կայքերը, ինչպես նաև ՊանԱրմենիան Մեդիա գովազդային գործակալությունը:

Թեև այս լրատվամիջոցները ունեն տարբեր սեփականատերեր, սակայն նրանք հանդես են գալիս որպես միասնական խումբ, ինչը նշանակում է, որ նրանք միասնական բիզնես շահեր են հետապնդում: Արմենիա Թի Վի, Ա Թի Վի, Արմնյուզ Թի Վի հեռուստաընկերությունների շահերի միասնականությունն ակնհայտ է, քանի որ այս հեռուստաընկերությունները հանդես են գալիս միասնականորեն որպես Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ սեյլզ հաուսի հեռուստատեսային հարթակներ: Ռադիո ջան է և Լավ ռադիո ռադիոընկերությունները միասնականորեն են վաճառում իրենց գովազդային ժամանակը: Tert.am և Blognews.am կայքերը միասնականորեն են հանդես որպես Դի Ջի Սեյլզ ընկերության համացանցային հարթակներ: Այս ամենի շնորհիվ ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ ընկերության կազմի մեջ մտնող Պանարմենիան մեդիա գովազդային գործակալությունը ձեռք է բերում ոչ միջազգային (քանի որ միջազգային գովազդատուները ներկայացված են իրենց գովազդային գործակալություններով), տեղական գովազդատուների առյուծի բաժինը: Այս մեդիա գործակալությունները ակնհայտորեն փոխկապակցված են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեռուստատեսային գովազդի դաշտում առկա են գերակշիռ դիրք ունեցող խաղացողներ, որոնց մասին Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ-ն դիմել է ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ ՍՊԸ-ի գերակշիռ դիրքի չարաշահման հարցով (հավելված 13): Առցանց գովազդի դաշտում նույնպես առկա են գերակշիռ դիրք ունեցող խաղացողներ, ինչի կապակցությամբ Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ-ն ևս դիմել է ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով Դի Ջի Սեյլզ ընկերության կողմից գերակշիռ դիրքի չարաշահման հարցով (հավելված 14): Հեռուստագովազդի շուկայում առկա է վստահության պակաս հեռուստատեսային չափումներ իրականացնող ընկերության նկատմամբ: Գերակշիռ դիրք ունեցող գովազդային շուկայի մասնակիցների առկայությունը սահմանափակում է լրատվամիջոցների անկախությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ռադիոգովազդի շուկան համեմատաբար անկախ է ու մրցակցային:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անկախ աուդիտի ենթարկել «Ադմոսֆեր Արմենիա» հեռուստալսարանը չափող ընկերության գործունեությունը մեթոդաբանության, օգտագործվող ծրագրերի և ընտրանքի տեսանկյունից՝ հեռուստավարկանիշների նկատմամբ վստահության ավելացման, հեռուստաալիքների միջև մրցակցությունը խթանելու, գովազդատուների բյուջեները ավելի արդյունավետ ծախսելու, լրատվամիջոցների անկախությունը բարձրացնելու նպատակով:
- Ստեղծել գովազդային ինդուստրիալ կոմիտե միջազգային ընդունված չափորոշիչների համաձայն, որի առաջնահերթությունը կլինի հենց այդ աուդիտի կազմակերպումը: Աուդիտի

Ֆինանսավորման համար առաջարկվում է դիմել գովազդային ընկերություններին, ինչպես նաև խոշոր միջազգային գովազդատուներին կամ միջազգային կազմակերպություններին: Անհրաժեշտ է հեռուստաչափումներ իրականացնող ընկերության գործունեությունը դարձնել հնարավորինս բաց, թափանցիկ, եւ, համաձայն MFA եւ EBU չափորոշիչների, այն միշտ պահել գովազդային շուկայի մասնակիցների վերահսկողության ներքո:

- Իրականացնել գովազդային շուկայի հետագա հետազոտություն՝ ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ, Տելեմեդիակոնտրոլ, Ադմոսֆեր Արմենիա եւ Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ ընկերությունների հնարավոր փոխակապակցվածությունը պարզելու համար: Այն հնարավոր է անել հեռուստաչափումների հետագա մանրամասն ուսումնասիրության եւ զուգահեռ որակական ուսումնասիրությունների, ինչպես նաև՝ շուկայի մասնակիցների հետ հարցազրույցների միջոցով: Այս աշխատանքները կարող է իրականացնել առաջարկվող գովազդային ինդուստրիալ կոմիտեն: Հեռուստաչափող ընկերության աշխատանքի կանոնակարգումը հնարավորություն կտա փորձել ստեղծել երկրորդ սեյլս հատուր, ինչը էապես կբարձրացնի Մեդիա Ինթերնեշնլ Սերվիսիզ ընկերության ցանկից դուրս մնացած հեռուստաալիքների գովազդային հնարավորությունները:
- Վերանայել հեռուստատեսային գովազդը կարգավորող օրենսդրությունը, քանի որ ներկայումս այն կանոնակարգում է գովազդի վաճառքը ըստ պլաներով, մինչդեռ իրականում հեռուստատեսային գովազդի վաճառքը հիմնականում իրականացվում է ըստ համախառն վարկանիշային միավորների:
- Կատարել փոփոխություններ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում՝ կարգավորելու համացանցային հարթակների գործունեությունը, ինչը հնարավորություն կտա հստակեցնել նրանց գովազդային հնարավորությունները եւ թափանցիկ ու հաշվետու կդարձնի նրանց ֆինանսական գործունեությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հեռուստաընկերությունների սեփականատերեր

N	Հեռուստաընկերություններ	Նախկին հիմնադիրներ	Ներկա հիմնադիրներ
1	«Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	ՀՀ կառավարություն	ՀՀ կառավարություն
2	«Հայկական երկրորդ հեռուստաընկերություն» ՍՊԸ	Բաբայան Արսեն, Էլոյան Ալբերտ, Զակնեֆտեգագատրոյ-Պրոմթեյ, «Պրոմթեյվա» Ապահով.	Մարտինյան Նատալյա 50%, Մայրապետյան Սամվել 50%
3	«Հ3 հեռուստաընկերություն» ՍՊԸ	«Անդրնավթագազին», Երիցյան Սերգո, Հայ.Իրավագ.Եվ Քաղաք, Մավիսակալյան Ռոբերտ, «Շեն-Կոնցեռն», Ղուշյան Համլետ, Սիմոնյան Ռուբեն, Ղարիբյան Վարշամ	«ԳԱՎԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ,
